ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/0107/02/25 ք. Երևան
14 Հունվարի 2025թ

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Դանիել Միխեյանի, քննության առնելով ԵԴ2/0107/02/24 քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑ

«Քանքարշին» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ նաև Հայցվոր կամ Ընկերություն)՝ ի դեմս ներկայացուցիչ Լևոն Օհանյանի, հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ նաև Դատարան) ընդդեմ պատասխանող ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարան ՀԿՀ-ի՝ հայցելով անվավեր ճանաչել (վերացնել) Արտաշատի համայնքապետարան կարիքների համար ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի այգիների, պուրակների կառուցում /բարեկարգում, վերանորոգում/» սուբվենցիոն ծրագրի շինարարական աշխատանքների կատարման շրջանակներում ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի վարչական բնակավայրերում այգիների, պուրակների բարեկարգման աշխատանքների կատարման նպատակով 21.10.2024 թվականի թիվ 1 որոշմամբ հայտարարված թիվ «ԱՄԱՀ-ԲՄԱԾՁԲ-24/116»

ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 6 արձանագրությամբ՝ «Քանքարշին» ՍՊԸ և «Դուստր Մարգարիտա» ՍՊԸ կոնսոր-ցիումի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումը:
Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիա-կան դատավարության ՔԴՕ 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան և բացակայում են նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը:
Դատարանն արձանագրում է, որ սույն վեճը քննության է ենթակա ՔԴՕ 27.2 գլխով սահմանված հատուկ հայցային վարույթի կարգով, որպիսի պարագայում՝ հիմք ընդունելով ՔԴՕ 234.6-րդ հոդվածը, անհրաժեշտ է պատասխանող ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարան ՀԿՀ-ից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-200-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:
2. Պատասխանող ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարան ՀԿՀ-ից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
3. Պարզաբանել կողմերին, որ՝
- ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, և այդ ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատար-վելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
- վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպան-ված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը.
- պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է

ներկայացնել միայն ապացույց-ները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառ-ներով:
- Հայցադիմումի պատասխանը կամ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
- գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի լրանալը:
- քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:
4. Եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր սահմանել 14.02.2025 թվականին:
5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Digitally signed by MKHEYAN DANIEL 2908790114
Date: 2025.01.14 19:06:45 AMT

Դատավոր՝ Դանիել Մխեյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am